

— Դուք որ հաւատք ունիք, շէճ գիտեիք թէ ինչ է հոգիի մը արժէքը... Ինչ օգուտ քառորդ ժամ մը աւելի կամ նուազ կեանքը՝ բաղդատութեամբ յատկանական փրկութեան...»

Եւ ինքնիրեն կանգնելով գերազանց նիւթով մը, կը փորձէր մինակ երթալ անոր քով զոր ազատել կ'ուզէր: Այլևս չէի կրնար տատամսիլ. ամողջապէս անձիս տիրելու անդդուելի կամք մը կը զգայի:

Դիցցազնը պատգարակի վրայ դնելը, սարսափելի բան մը եղաւ. իր մարմինը երկուքի կը ծալուէր: Յաւն անհնարին էր. քրտինքը իր դէմքը կը թրջէր և ինքը շրթունքը կը խածնէր, բերնէն զանգատ մը չհաննելու համար:

Իր ընկերին խոստովանանքը կարճ տեւեց. քահանային ոյծերը արագօրէն կը սպառնէին: Արձակման պահուն ինծի նշան ըրաւ. մօտեցայ իրեն.

— Սգնէ ինծի արձակման նշանը ընելու համար. այլևս չեմ կարող:

Եւ ես մեծ պատիւն ունեցայ այն գերազանց վայրկեանին հոգեվարք դիցազին բազուկը բռնելու:

Մահը շուտով իջաւ երիտասարդ քահանային վրայ. իր մօտ ծնրադարձ, չէի համարձակեի անոր օգնութիւն մը մատուցանել. ինծի կը թուէր թէ այն մարտիրոսին մարմնայն դպչիլը սրբապղծութիւն մըն էր:

Վերստին բացաւ իր աչքերը, և մեղմիւ իր ձեռքը իմինիս վրայ դնելով, շնչեց: — «Աղօթեցէք, արթեցէք ինծի համար: Ի շնորհս Աստուծոյ»: — Իր նայուածքը այնքան վստահ, այնքան երջանիկ էր, որ, հակառակ աստիկ կսկիծներուն, ինծի կը թուէր թէ այն հոգին արդէն կը վայլէր Աստուծոյ ներկայութիւնը: Շատ անգամներ գոչեց. — «Երկինքը... երկինքը...» — Եւ կիսամեռ ձեռքով կը շոյրք վիրաւոր գինուորը, իր խոստովանորդին:

Քիչ վերջ հոգին կ'աւանդէր:

Հրամանատարը, որ ներկայ եղաւ այս տեսարանի վերջին մասին, ինքնաբերաբար ծուռկի գալով և արտասուալիբ աչ-

քերով ըսաւ ինծի. — «Տեսէք, այս բաները օգտակար են: Այո՛ օգտակար են, օգտակար: Այս հոգիները Ֆրանսայի փրկանքն են: Կրնայ Աստուած չնհրել մեզ և չփրկուել, երբ վերջ անոնք մեզի համար պիտի աղօթեն...»

ՆՇԱՆԱԻՈՐ ԱՅՅԵԼՈՒՔ Ի Ս. ՂԱԶԱՐ

Հարիւրամեայ տարեդարձ մը

Ահաւասիկ մերձեցաւ զարունն, ծառեր սկսան զգննուլ զունագեղ ծաղկալից պատմունաններն, նորադարձ ծիծուռնք օդոյ մէջ կը զծեն իրենց ոլորտապտոյտ շրջաններն, և խաղաղաւէտ լճակիս հայելուոյն մէջ կը ցոլան արեւու ճառագայթից ծիծաղկոտ անդրադարձութիւնք: Վենետիկ ալ կը պատրաստուի ընդունել իւր համաշխարհիկ այցելուաց խումբերը որոնք հեռուոր սահմաններէ կը բերեն իրեն կենդանութիւն, բարօրութիւն, երջանկութիւն ու ժպիտ: Մշտածպիտ Ս. Ղազարն ալ իւր պատերուն կարմրութիւնը զարարագեղ կանաչութեան հետ՝ կը ցոլացնէ հայելանման ջուրերու վրայ, և իւր ծաղկանց բոյրն ու տպագրական մամուլներու ճոխնչն այցելուներու խումբ մ'ալ կը ձգեն հոն: Ասոնք ուխտաւորներ են զաղափարի. եւրոպեան ամենաժպտուն գեղեցկութեան մէջ հեռուոր նսեմ արեւելքի մը փոքրիկ ծուէնը կ'ուզեն տեսնել, արեան պատմութիւնները լսած են Հայաստանի վրայ, և պատկառոտ ակնածութեամբ կը մերձենան, վերադառնալու համար յետս ամենաքաղցր տպաւորութեամբ սրտերին համակուած:

Վանական միայնութիւնը, ամփոփ այլ ոչ տխուր, լռին բայց ծիծաղկոտ սրահները, մեղուաջան վաստակը միաբանից, ամենուրեք ցոլացումն կրօնական գիտական գեղարուեստական հմայքոտ զանձերու, կը հեղուն հոգիներու մէջ խաղա-

դուժինն, սրտերու բերկրութիւն և միտքերու զօրութիւն:

Ս. Ղազարու այցելութիւնը գաղափարական պտոյտ մ'է. ամենէն հաճելի և օգտակար ժամանցն է վիճեակոյ մէջ:

Այսօր մեր ընթերցողաց առջև անցնալ տարւոյ նշանաւոր այցելուաց խումբ մը ներկայացնելէ առաջ, լսենք զարաւոր արձագանգն արքայական այցելութեան մը:

*
**

Վերապատուեալ Տեսաճ Հ. Միրայէի Վարդապետի ողոյն սիրոյ ի Տէր

Ի Ֆիւսսօ, ի 28 Յունիսի 1816

... Մէք որք կամք աստ ի Ֆիւսսօ հանդերձ նորընծայիւք, խնամօք Տեսաճ առողջ եմք, որպէս և եղեալքն ի վանս, որք յայտոսիկ աւուրս պատուեցան փառաւոր այցելութեամբ: Քանզի ծեր արքայն սպանիացոց կարողս Գ. որ շրջէր յիտալիս, քանի մի աւուրքը յառաջ եկն ի վէնէտիկ հանդերձ բազմութեամբ պաշտօնէից. որ և իբրև զմի ի նշանաւոր տեղեաց քաղաքին, զոր արժան իցէ տեսանել՝ համարելով և զվանս մեր, զնաց սնդ (զնաց ասեմ, զի ես ըստ բերելոյ դիպուածոյն՝ ոչ զտայ սնդ, զուրով աստ ի գեղջս) ինքն, և կրտսեր որդի նորա ինֆանդէ ասացեալս և փոխնչիփէ տի ֆաչէ իշխան փառաւոր, և հազարապետ տան նորա այր քաղցր սպանիացի քաղաքավար. և վէնէտիկեան սեպուհը թեփօշո, և Մոլինի, և կրատէնիփօ, և այլ իշխանազունք: Եւ մերքն ամենեքեան որք ի վանս՝ կացեալ կարգաւ առ դրան վանացս, ընկալան զարքայն արքայավայել պատուով, և տարան նախ յեկեղեցի ուր ի դասամէջն պատրաստեալ էին առթարան քեղայնապատ. սնդ ծունր եղեալ արքայն հանգերձ որդուփն արարին ազօթս երկար երկիւղած ձևով որպէս ճշմարիտ սպանիացի. սնտի տարան ի սեղանատունն, ապա ի

զրատունն, ուր ցուցեալ նմա քանի մի զբեանս Հայոց, ետուն ընծայ արքայորդւոյն, և հազարապետի մի մի «հաւատով խոստ». զոր առեալ արքայի ի ձեռս՝ ընթերցաւ ի գաղղիականէն քանի մի տուն՝ և ասաց, ամենայն կարևոր բանք կան յազօթս յայս: Ապա տարան ի սենեակն արքայական, ուր արքայն ինքնին ծանեաւ զկենդանագիր սրբազանին. ապա ի նորընծայարանն և ի վարժարանն, ի վերջոյ մուծին ի մեծ սենեակն: Ամենայն տեղիք վանացս եղեն հաճելիք, առաւելապէս սեղանատունն, և առաւել քան զայն զրատունն. այլ լրուփն զուարճութեան եղև անդ ի մեծ սենեակն, ուր տեսեալ արքայի զիւրն կենդանագիր եղեալ ի տեղի պատկերի Մինաս եպիսկոպոսին, ժպտեցաւ և զուարթացաւ, և իւրքն խնդացին յոյժ յոյժ, մանաւանդ ի լսելն թէ ի նմին իսկ պահու բերեալ էր այն ի տանէ Սեղորոսին: Քանզի մինչչև էր հասեալ արքայի ի վանս, մերքն առեալ հաւանութիւն ի Յակոբ աղայէ (զի և նա ի լսել թէ զայ արքայ ի վանս, փութացաւ յառաջ հասանել, զի և ինքն տակաւին չէր ներկայացեալ արքայի) յեղցին զնաւակ քառաթի, և մինչչև էր շրջեալ արքայի ընդ ամենայն տեղիս վանաց, և հաս կենդանագիրն: Ապա տարան զնա ի պարտէզն, սնտի ի տպարանն, և առաջի նորա տպեցին հայերէն և իտալերէն գրութագրովք զանուն իւր և զանուն թագոււոյն, (որ չէր եկեալ ընդ արքայի վանս տկարութեան ինչ իւրոյ), յորմէ մի մի օրինակ առին արքայն և արքայորդին. իսկ փոխնչիփէ տի ֆաչէն չորս և հինգ օրինակս. և այնպէս հաճ և հաւան ամենայն իրօք ելեալ զնացին... Յետ երկց աւուրց արքայն և թագուհին համօրէն ուղեկցօք իւրեանց եկին աստ յԱղդա ի պալատ պիզանեան, որ այժմ՝ է սպարանք արքունի. ուր արքայն առնէ բազանիս հանգանին ջրով բերելով յԱպանոյէ. զնացաք այն ընդ Հ. Աթոռակալին առեալ ընդ մեզ և զՀ. Անդրէասն, և ի ձեռն նախագրեալ անուշակ հազարապետին յանդիման

եղեալ արքային և թագուհւոյն, շնորհս կալաք արքայի վասն անձամբ պատուեւ լոյ զվասն մեր, միանգամայն և ցաւելով մեծապէս ընդ չգտանիլ մեր անդ յայնս պիտի բարեպատեճ ժամուռ իսկ նորաց երկորին սիրով ընկալեալ զմեզ, եցոյց արքայ զանձն մեծապէս հաճեալ ընդ վաշիշութիւն և ընդ բարեկարգութիւն վանացս, և ընդ զբաւոր երկասիրութիւն մեր ի լուսաւորութիւն ազգի մերոյ, զի պատմեցաւ նմա. իսկ թագուհին ընդհակառակն եցոյց ցաւիլ, զի ոչ կարաց և ինքն երթալ ի վասնս. սակայն որպէս ասաց նա ինքն հազարապետն, կամի արքայն միւսանգամ զալ ի վանս մեր՝ տեսնել հայ ծիսով պատարագ, եթէ իրք իւր ոչ ստեպեցնն զնա փութով դառնալ:

Սոչաչփ ինչ վասն այսր, զոր մանրապատում գրեցար ձեզ ի զբօսանս՝ չուենելով ի ժամուս զայլ ինչ կարեոր ի գրել. մանաւանդ զի նոր ինչ էր այս և անկարծելի. բազում փոփոչիփէք զազդիացիք, զերմանացիք, անզդիացիք և իտալացիք, նաև Պապ իսկ եկին ի տես վանացս, բայց ոչ երբէք թազ Սպանիոյ, որ է ի վերջին ծագ Եւրոպայ. և ամենեքեան հաճեալ և գովովթեամբ զնացին, և յիւրաբանչիւր տեղիս հոչակեցին զվասնս սուրբ Ղազարու. մի միայն յազգս մեր զայս ոչ տեսաք, և ոչ լուսաք. պատճառն յայտնի է. զորմէ երկար գրեալ կայ յազգասէր անուանեալ գրքի... Ողջ լիջիւր ի Տէլլի. իր. Ստեփաննոս Ազոնց Աբբ. և Արքեպիսկոպոս

*
* *

Անցեալ տարւոյ այցելուաց մէջէն յիշատակենք միայն հետեւեալ մի քանի անձինք, ցաւելով որ տեղւոյն անձկութիւնը կը բռնադատէ զմեզ լռելու խիստ շատեալու անունները:

ՅՈՒՆՈՒՄԱՐ

Գեր. Պետրոս Եազէլ կաթիկ. Նեվէրի (Գազդիս)
» Գ. կանոնի կանոնիկոս » »

Տեկին Ա. Թ. Աբգար, Պ. և Սթե. Աբգարեանք առնաւաստմ ազգայինք ի կալաթայ Հնդկաց
Հ. Տամազլոյ Սարգսրի առաքելական քարոզիչ ի Պուլիեա
կոմս և կոմսուհի Տը լա Պետաուպէր
» » Տը Գրուսի-Շանէլ, ընտանեօք

ՓԵՏՐՈՒՄԱՐ

Պարոն Գառլ և քոյրն Պարոնուհի Սիշուրն Կարգեւոր-նի-Պորուշին
Վիշգորիոյ Սբէրայի հրամանատար արքեպի Վարդէ մարտնասի
Ուս. Թաքիս Թեհրասթի (ի ճաբոնէ)
Տօթթ. Մեմիտեան

ՄԱՐՏ

կոմս և կոմսուհի Սալպուրկ
կոմսուհի Ալ. Տիբն
Պ. Աբրիանոս Միթձանի հեղատոս Ուրուկուսյի
Լէտի Էլմաս
կոմս և կոմսուհի Միւղէլչ ընտանեօք
» » Շաֆուլ, »
Պարոն Տիւ Հուլէյ »
» Թորվէլ Պոնֆիլի »
Իշխան Բաուրլ Պորկէզ »
Իշխանուհի Մարի Ուսուսթ
» Հեքման Երուսէրկ
կոմսուհի Թեքիզ Գուլաւրոյ
Ջորավար Ֆոն փոպէլտարթ
Մեծա Կոնքս Միքայէլ Միքայէլովիչ, կրկն դասերօք
և անուանատմ անդլուսի Սը. Վ. Թրաֆֆորտի նա.

ԱՊՐԻԼ

կոմս և կոմսուհի Ամզենոֆ
Պարոն Հան
» Մոնկումբրի-Նորգոն
կոմս կրէքի ընտանեօք
» Պորբուէոյ »
Տ. Ռոստանս հուլակուր զբազմուհի իտալացի
Տօթթ. Ֆելքոս Աւետիքեան հոնգարաւայ փաստաքան
կոմս և կոմսուհի փոքրթ
» » Լուրբէս-Ֆիւրադէնէք
Պ. Պազի Պ. Միտի, Կախազակ Ռոստանիոյ ծերա-կոյտի, նախկին նախարար կայն

ՄԱՅԻՍ

կոմս և կոմսուհիք Հանուր-Մաթթէրգի, Եէնպուրկ-Հարէնջեթայն, Գոնաուրգի, Հուսո, Եէֆֆէլ, Եէնպուրն, Օլիվիէր-Վ. Կոմսուհիք
Տ. Պաղոս Մարլը
կոմսուհին Թրիանի-Մըսըլը
Պարոն և Պարոնուհի Հէնիկ Օ Գարբոլ

ՅՈՒՆԻՍ

Իշխան և իշխանուհի Թուսանեան
Ազգեսանդր Բարխուզարեան, ընտանեօք
Կոմսք Հուշար, Գասպրիլոսի, Ֆոսասդի,
Գոնֆարոնիէրի
Զորավար Գոռքեպու
Անտան Վ. Բ. Բ. - Իսկէնտերեան
Կղեմէս Վ. Աստուրեան
Սիամանթօ
Իշխանուհիք Շէնպուրի
Իշխանուհիք Մարինա և Նատէմաս Ռուսիոյ
Իշխան Ռոման Ռուսիոյ
Իշխանուհի Հելեն Ռամանովսի գքսուհի Լէոյխտէն-
պէրի
Մեծգքսուհի Վլատիմիր Ռուսիոյ
Կոմսուհիք Բուշքին և Վիգորովսիք

ՅՈՒՆԻՍ

Կոմսք Կիւի ՏԷ Պօֆոռ, Տիոնիդի Պէմպոյ,
Կուբլիխարոսի
Իշխան Բիէր Վուլքովսի
Աւշիգքսուհի Ակուատա Աստուրիոյ
Կոմսք Շփերին, Ֆրանց, Պիլիով, Լինան և այլն

Այսուհետև համաշխարհիկ պատերազմը
վեր ի վայր կը յուզէ ամէն ինչ և ամէն

ոք կը փութայ ի կոչ իւր հայրենեաց ու-
րով և այցելուաց թիւը կը նուազի մե-
ծապէս

ՕԳՈՍ.

Պարոնուհի Ռիշշէր
Երեսփոխան Թուգերգոյ Կալի
Եւանգելիան, Մաթոսեան պէյ, Շերիտեան պէյ, Հիւր-
միզեան, Գուրգենեան, Տիկ. Տիր. Երազրեան,
Սարգիսեան, Էտրիտեան, Գալանթարեանք ազ-
գային ընտանիք
Ուս. Հապէր
Իշխան Տորիա

ՍԵՊՏ.-ԴԵԿՏ.

Հարվէյ Գարբու Հիւպատոս Միացեալ Նահանգաց Ա-
մերիկոյ
Մէննմէտ Նապի պէյ դեսպան Օսմ. Կայսր. ի Հոովմ
Ալի Ռիզա պէյ Հիւպատոս Օսմ. ի Հոովմ
Ասսան Ֆերիտ Տինա Իշխան Հնդիկ
Կուխույ Կորիէրի Հիւպատոս շարեանկան Կայսրու-
թեան
Ուս. Երկա երեսփոխան Ռամանիոյ
Կոմսուհի ՏԷ Մոնպէլ ծն. Իշխանուհի Պարկէզէ
Կոմս Տի Ռովազենտա Նահանգապետ Վենետիոյ:

Մ Ո Ռ Ա Յ Ո Ւ Ա Ս

Բ Ա Յ Յ Ա Ն Մ Ո Ռ Ա Ն Ա Լ Ի

Յ Ո Ւ Շ Ի Կ Ն Ե Ր Է

27.

Սևաքար երեք աստիճաններու վրայ՝ խարըսխաւոր հընգհատուածեան կարմրա-
քար՝ որու մէկ ճակատին փորուած կայ շորվառ, առտարան և խալ. իսկ միւս ճա-
կատին ու մէկ կողին վրայ՝ հետեանալ տողերը.

Երևոյ 1784 ամի քահանայացեալ ի 18՝2
և վահիճանեալ ի 1865 ամի յոշտոյ նոր կենաց յայտ
նոք դամբարան. այր քարեկենցաղ և քարոզարան